



## Arbeitsgruppe Anerkennung – gegen Genozid, für Völkerverständigung e.V. (AGA)



## Պատեն - Վիլթեմպերկի Հայ Համայնք Armenische Gemeinde Baden-Württemberg e.V.

22. մարտ 2014

### Մամլո համատեղ հաղորդագրություն

**Թուրքական բողոքները Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, ուղված ընդդեմ գիտության և մշակույթի ազատության իրավունքի:**

Օրերս գերմանական Կոնստանց քաղաքի թատրոնը անդրադառնալով է 99 տարի անց, սակայն առ այսօր զգայուն ոլորտ հանդիսացող մի թեմային՝ մեկ ու կես միլիոն հայ բնակչության Օսմանյան ցեղասպանությանը:

Բողոքի հիմքը հանդիսացավ Էդգար Հիլսենոպի 1989թ.-ի նշանալի ստեղծագործության <Վերջին մթերի հեքիաթ>-ի բեմականացումը Կոնստանց քաղաքի թատրոնում: Թուրքական իշխանության և թուրք բողոքողների ակտիվ ճնշման տակ գտնվող պրեմիերան տեղի ունեցավ սույն թվականի մարտի 21-ին գերմանական ոստիկանության ներկայության և հսկողության ներքո:

Միաժամանակ գերմանական Կարլսրուհե քաղաքի Թուրքիայի գլխավոր հյուպատոսին հաջողվեց հիմք հանդիսանալ բողոքի ձևավորմանը. մասնավորապես թատրոնի տնօրեն՝ պրոֆերոր, դոկտոր Քրիստոֆ Նիքսը, ստացավ գրություն թուրք հյուպատոսից, որում ներկայացված էր Թուրքիայի պաշտոնական տեսակետը Հայոց Ցեղասպանության վերաբերյալ՝ մատնանշելով պատմական փաստերի մերժումը: Ներկայացումից առաջ Քրիստոֆ Նիքսը պարտավոր էր Կոնստանցի մսկիթում հանդիպել Կոնստանց քաղաքի իմամի հետ, որպեսզի կանխարգելվեին հետագա բռնկումները:

**Բաղեն-Վյուրտեմբերգի Հայ Համայնքը** հայտնում է իր անհամաձայնությունը կատարվածի վերաբերյալ: **Արժանապատիվ Տեր Տիրատուր քին. Սարդարյանն** ասում է. «Օսմանյան Ցեղասպանության փաստը միջազգայնորեն ամբողջովին անհերքելի է: Եթե Թուրքիան այս հանցագործությունը մինչ օրս մերժում է, ապա դա հանդիսանում է սեփական տգիտության նշան, եթե Թուրքիան նույնիսկ պահանջում է Գերմանիայում աղավաղել պատմությունը, դա ուղղակի խելագարություն է: Կոնստանց քաղաքում մենք ականատես

ենք մի արտուդ պայքարի՝ ընդդեմ պատմական ճշմարտության և ընդդեմ մշակույթի ազատության իրավունքի»:

Հայկական համայնքը շնորհակալություն է հայտնում Քրիստոֆ Նիքսից և Կոնստանց քաղաքի թատրոնի ամբողջ թիմից, ինչպես նաև բոլոր այն աջակիցներից, ովքեր անկախ բոլոր դիմակայությունների իրականացրեցին ստեղծագործության բեմականացումը: «Դա հիանալի երեկո էր: Բեմականացումը մեծ ազդեցություն թողեց ինձ վրա: Այս երեկոն ցույց տվեց, որ իսկական արվեստը միշտ լուսավորում է ճշմարտությունը»:

**ՅՃՅ նախագահ, դոկտոր Թեսսա Հոֆմանը** ասում է, - «Ես զգում եմ արդեն 40 տարի, թե ինչպես է թուրքական դիվանագիտությունը Գերմանիայում և այլ պետություններում ոտնձգում մշակույթի, մեդիայի և գիտության ազատության իրավունքին: Դրան համընթեր բացահայտ, կենտրոնացված ժողովրդական զայրույթի միջոցով փորձ է արվում հանրաիրավական կազմակերպիչներին վախեցնել, որպեսզի միջոցառումները տեղի չունենան, կամ օգտագործվեն որպես ամբիոն սեփական տեսակետը և փաստերի աղավաղումը ներկայացնելու համար: Այդպես եղավ նաև Կոնստանց քաղաքում, այդպես եղավ նաև 2011թ.-ին Շտուտգարտի համալսարանում, որի ռեկտորը թուրքական պահանջի ներքո պարտավորված էր <իր> համալսարանում Օսմանյան Կայսրությունում քրիստոնեաների ցեղասպանությանը վերաբերող միջոցառումը կասեցնել: Այն, ինչ ինձ ամենից վրդովեցնում է հանդիսանում է գերմանացի կազմակերպիչների քաղաքացիական խիզախությանը պակասը, ովքեր թուրքական պետական ցեղասպանության մերժման ազդեցության ներքո այլ կողմ են քաշվում, ոչ անհրաժեշտ համաձայնությունների են գնում, կամ արողովին հրաժարվում են միջոցառումը իրականացնել: Այդ ճշումը, ինչպես նաև Թուրքիայի իշխանությունների կողմից պետական ճնշումը, մարդու իրավունքների և քաղաքացիական իրավունքների տեսակետից ելնելով, անընդունելի են»:

Հետադարձ կապ.

**Armenische Gemeinde Baden Württemberg**

Pfr. Dr. Diradur Sardaryan

Postfach 126, 73001 Göppingen

Tel.: +49 7161 8084717; Fax: +49 7161 8084709

Email: [gemeindepfarrer@agbw.org](mailto:gemeindepfarrer@agbw.org)

WEB: [www.agbw.org](http://www.agbw.org)

**Arbeitsgruppe Anerkennung – Gegen Genozid, für Völkerverständigung e.V.**

Dr. Tessa Hofmann

Tel.: 030/8516409

Email: [vorstand@aga-online.org](mailto:vorstand@aga-online.org)

**Arbeitsgruppe Anerkennung – Gegen Genozid, für Völkerverständigung e.V.,**

P.O. Box 41 10 24, D-12120 Berlin

Tel.: +49/(030)851 64 09 Fax: +49/(030)851 79 74

Tessa.Hofmann@aga-online.org

[www.aga-online.org](http://www.aga-online.org)